

Proficiency

295

278

2004

ՉԵՌԱՅ ՅԵՅՐԱԿ

Հ Ա Յ

ՍՐԲԱԶԱՆ ԵՒ ԳԵՂԶՈՒԿ

ՀԱՄԵՐԳԻ

Խմբագրեց՝ համառոտ ներածութեամբ

ԿՈՄԻՏԵԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ




10.

ԱՂՆԻՅԱՆՆԵՐԻՍ.

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

1911

784
4-68



Արժանատի արգիլակ 1.

Կոմիտաս վարդապետի ստորագրու-
թիւնը չի կրող օրինակներն անվաւեր են

295-2014

ԿՊ 294



(32628-67) a-

Ե Ր Կ Ո Ւ Խ Ն Օ Ս Ք

Հայ գեղջուկը բնագոյաբար բաժնած է իր
երգական երաժշտութիւնը երեք տեսակի՝

Ա. ԲԱՌ ԱՍԵԼ ,

Բ. ԽԱՂ ԱՍԵԼ եւ

Գ. ԽԱՂ ԿԱՆՁԵԼ :

Ա. ԲԱՌ ԱՍԵԼ կը նշանակէ բառ առ բառ
ասել՝ հասիկ հասիկ հնչել՝ եղանակաւոր պատ-
մել. համապօր հնոց *վեպ ասել* իմաստին: Յի-
րաւի, այս կարգի երաժշտական գրականութեան
նիւրն է, բացառապէս, հին եւ նոր ժողովր-
դական անգիր գիպասանութիւնը: Ռոմիսէսեւ
վէպերը կը պատմուին գեղջուկի հանգստեան
օրերուն՝ ձմեռուան երկար գիշերներուն եւ
խրհիքի մէջ նստած, ուստի *նստմանց* եւս կա-
սեն: *Նստմանց* վէպերը *բառ ասելու* պահուն
ունկնդիրներն, առ հասարակ, բոլորովին խոր-
հրդաւոր լռութիւն կը պահեն, ջերմեռանդ
համասացեալի տեսք կառնեն եւ ակնապիշ
կ'ունկնդրեն գեղջուկ գուսանի հնչուն բերան-
խօսող անցեալն ու ներկան:

52159 - Ա. Գ.

Այս ձեւը կը ստարուցակէ հայ գեղջուկ երաժշտութեան տարերք՝ բառերի հնչական ելեւէջք՝ *հիմնածայն, շեշտ եւ յուր*, եւ տալաշափութեան հիմունքները՝ վանկերի ամանակը՝ *սուղ եւ երկար*: Բառ *ստեղու* ելեւէջն անկալուն է, իսկ ամանակը՝ հաստատուն:

Բ. ԽԱՂ ԱՍԵԼ կը նշանակէ՝ խաղաւոր, ռնաւոր, նոյն անել՝ երգել: *բառ ստեղու* եղանակաւորումն է: Այս ռնով կ'երգուին գրեթէ բոլոր տեսակ գեղջուկ երգերը եւ մեներգի բնոյթ չունեցող վիպերգերը: *Խաղ ստեղու* ձայնաւարն ու տաղաշափութիւնն հարուստ է:

Գ. ԽԱՂ ԿԱՆՉԵԼ կը նշանակէ՝ խաղաւոր, ռնաւոր, նոյն կանչել՝ բարձրածայն ու զարդարուն գեղգեղելով երգել: *Խաղ կանչելը խաղ ստեղուն* ընդարձակ ձեւն է: Այս ռնով կ'երգուին, ըստ մեծի մասին մեներգները, որոնց ձայնեւելեջներն առաւել ընդարձակ սահման ու պտոյտներ ունին, որպէս դիւցազներգութիւնները, վիպերգութիւնները, անտունիները, ողբերը, եւ այլն:

Հայ եղանակներն ունին նոյն, ինքնատիպ տոնումներ եւ շեշտաւորումներ, որոնք, չափածոյ լինելով հանդերձ, ազատ ու անկախ են, հակառակ արեւմտեան երաժշտութեան, ուր յանգրն ու շեշտ փոխադարձաբար կաշիւանդուած են: Հայիական երաժշտական յանգն ու շեշտ միասին կը կենդանացնեն մի այնպիսի ձայնա-

կան սեսարան, ուր առաջինը կը գծագրէ հոգու-
ու ւրտի յուզումներու տեսողութիւնները՝ համա-
շարի ու յանգաւոր տրոհումներով. իսկ երկրորդը
կը նկարէ՝ քափն ու Էռանդը՝ բազմասեսակ ու
պերն ձայներանգներով :

Հայ գեղջուկ երգերն ունին այսպիսի շէնք.

ա. ԲՈՒՆ ԵՐԳ, որ կրկնակ յունի.

*բ. ԲՈՒՆ ԵՐԳ ԵՆ Կրկնակ՝ փոխ առ փոխ
երգելի.*

*գ. ԲՈՒՆ ԵՐԳ ԵՆ Կրկնակ՝ սոյ առ սոյ ու
փոխ առ փոխ երգելի ԵՆ*

*դ. ԵՐԿՈՒ ԶԱՆՍԶԱՆ ԵՐԳԵՐ, որոնք հարց
ու պատասխան են, կամ որ ԵՆ է ներքին նան-
գամանով են կապուած, առաջին, երկրորդ ԵՆ
երրորդ ձեւերով փոխադարձաբար հիւսուելով
Երգելի :*

Բուն երգը կ'ընդգրկէ եղանակի վիպա-
կանը. իսկ կրկնակը՝ բնարականը, որ գեղջուկ
երաժեշտութեան ոգին է. ուստի բուն երգի եղա-
նակն անոն է, անպանոյն ու պարզ է՝ նման
խօսելուն. իսկ կրկնակինը՝ ռեալոր, զարդարուն
ԵՆ շարժուն :

Բուն երգի բանաստեղծութիւնը համեմուած
է պատկերաւոր համեմատութիւններով, իսկ
կրկնակինը՝ գոյնզգոյն բացազանչութիւններով
կամ կարն ու կտուկ նկարագրութիւններով :
Առաջինը կը բացատրէ միտքը, երկրորդը կը
բարգմանէ զգացումները :

Գեղջուկը բնութեան հարազատ գաւաին է. ուսի հաւակել է բնութիւնը բովանդակ հոգւել ու ւրսով: Իր երգերու մէջ բնութիւնը կը խօսէ. որովհետեւ բնութիւնն է նախ իր մէջ խօսած: Իր ւրսի մէջ բնութեան ծովը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բնութեան ալիքներու վրայ կը դեղերէ: Իր երգերն իր կեանքն են, զի իր ամբողջ կեանքը իր երգերու մէջն է ներշնչած: Վերջապէս, գեղջուկ երգերը տեսակ տեսակ ստուն հայելիներ են, որոնք զատ զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնութիւնը եւ կեանքը կանդրադարձնեն:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԾԱՆՅԹ. Տեսակիս գեղջուկ երգերու մեծ մասն առնուած է Կոմիտաս Վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի խմբագրած Ժողովրդական «Հապար ու մի խաղ», երգարաններու և. եւ Բ. յիսնեակներէն: (Տպարան Մայր Արոտի Ա. Էջմիածնի, 1904 եւ 1905):

ՄԱՍՆ Ա.

ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

1.

Պ Ա Տ Ա Ր Ա Գ

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութի՛նց
լի կն կրկինք կւ կրկիր փառօք քո .
օրհնութիւն ի բարձունս .

Օրհնեալ սր եկիր կւ զալոցդ ես ան-
ուամբ տեառն .
ովստննա ի բարձունս :

2.

Ո Ղ Բ Տ Ի Ր Ա Մ Օ Ր Ն

Տիրամայրըն հանգէպ որդւոյն
կայր ի խաչին .

Եւ լըսելով ըզծարաւին
կայր ցտապին .

Ի փուշ պսակըն դիտելով

Ողբ , կսծ վայ տայր իւր անձին :

«Աչա՛ցըս լոյս , ս՛րբեակ , Յիսուս ,
Ես ընդ քեզ միռանխմ » :

ՋՐՈՐՀՆԵԱՅ ԵՐԳԵՐ

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ
 Երարիչն Աստուած ի Յորժանան եկեալ,
 Յորժանան լուեալ փախստական դառ-
 նայր,
 Վասկ առ վասկ պսագամաւոր լինէր .
 «Գե՛տ , մի՛ զարնուրիւր , քո արարիչն
 եմ ես .
 Եկեալ մկրտիմ եւ լուանամ զեկզակ» :

3. Բ.

Այսօր ձայնն հայրակ ան
 Յերիցից իջ՛ալ հաճոյսկան՝
 Արեւելոյց Արլուոյ վըլ՛ոյն :

«Ե՛յ յարգորէ ,
 Գե՛տ յարգորէ ,
 Գե՛տ Յորժանան» :

Յարգորական ձայնիւ երգէր
 Մեծ Կարապետն Յովնաննէս :

4. Ա.

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Ամէն: Հա՛յր սուրբ, Որդի՛ք է սուրբ,
 Հոգի՛ք է սուրբ: Օրհնութիւնն Հօր եւ
 Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն, այժմ եւ
 միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

4. Բ.

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛,
 Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛:

Արի՛, Աստուած հարցն մերոց,
 Որ ապաւէնդ ես ներկելոց,
 Հաս յօգնութիւն ծառայից քոց,
 Լեր օգնական ազգիս Հայոց:

Տ Ա Ղ Յ Ա Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Հաւիւց մի պայծառ տեսի՛ անհման .
 Աննմանիդ ո՞վ նման . դո՛ւ նման՝ աննման :
 Յայն քառաթիւնն Վերայ՝ անհման .
 Աննմանիդ ո՞վ նման . դո՛ւ նման՝ աննման :

Շ Ա Ր Ա Կ Ա Ն Ո Տ Ն Ա Լ Ո Ւ Ա Յ Ի

Այսօր կանգնեցաւ .
 Աւազան մը քառաթեան՝
 Ի թողու թիւն մեղաց մերոց :
 Այսօր Տէրն մեր լուանայր
 Զոտս աշակերտացն ,
 Եւ պատուիրէր զայս ասելով .
 «Մի ոմն ի ձէնջ , կղբարք ,
 Մասնելոց է զիս ի մոն ,
 Եւ որոշի յաշակերտացդ» :
 Զայն լուեալ Պետրոսի՛
 Ակնարկէր առ Յովնաննէս .
 Հարցանել , թէ ո՞վ իցէ :

Քանն , զոր ասաց Յիսուս ,
Տրամեցոյց զիւր զաշակերտսն ,
Եւ խառվեց ան ամենեքեան :

7.

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հա՛յր մեր , որ յերկինս ես ,
առւրբ եղիցի անուն քո ,
եկեացէ արքայութիւն քո ,
եղիցին կամք քո ,
որ գէտ յերկինս եւ յերկրի -
զհոց մեզ հանապազորդ
առւր մեզ այսօր ,
եւ թող մեզ զսպարտիս մեր ,
որպէս եւ մէք թողումք
մերոց սպարտ սպահանց ,
եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն ,
այլ փրկեա՛ ի շարէ :

I.

Կ Ա Լ Ե Ր Գ

Հօ՛, ոօ՛ւ, օ՛, լօ՛, լօ՛, լօ՛, լօ՛:

Ա՛րբ, ա՛րբ, քե՛ մատաղ.

Հօ՛, Ե՛զը, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛.

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հա՛, կա՛ւ արա, մա՛ն արա.

Հօ՛, Ե՛զը, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛.

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հա՛, կալը դարման արա.

Հօ՛, Ե՛զը, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Յօրենն ինձ, դարմանը քեզ.

Հօ՛, Ե՛զը, ջա՛ն,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛,

Հօ՛, ոօ՛ւել, հօ՛:

Հաշանը գարման արա ,

Հաշանը գարման արա .

Պոե'րե , հո'ւմ , պոե' ,

Պոե'րե , հո'ւմ , պոե' ,

Պոե'րե , ջա'ն :

ՍԱՅԼԵՐԳ ՂԱԶԱԽ ԳԱԻԱՌԻ

Հօ'լ արա , գո'մէշ , ջա'ն ,

Հօ'լ արա , գո'մէշ , ջա'ն ,

Հօ'լ արա , գո'մէշ , ջա'ն , հօ' .

Հօ'լ ել , հօ'լ ել , հօ'լ ել , հօ'լ ել .

Հօ' , ջա'ն , հօ' :

Թօ'լ արա , գո'մէշ , ջա'ն ,

Թօ'լ արա , գո'մէշ , ջա'ն ,

Թօ'լ արա , գո'մէշ , ջա'ն , հօ' .

Հօ'լ ել , հօ'լ ել , հօ'լ ել , հօ'լ ել .

Հօ' , ջա'ն , հօ' :

ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՅ ԶՈՐԻ

Հօ՛ւ աբա , Կ՛ղօ՛ ,

Ջա՛ն , ա՛ղբեր , փա՛ն , հօ՛ .

Թօ՛ւ աբա , Կ՛ղօ՛ ,

Ջա՛ն , ա՛ղբեր .

Գե՛ , սի՛րուն , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ ,

Գե՛ , ծի՛րան , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ ,

Գե՛ , sn՛կան , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , հօ՛ :

Հօ՛ւ աբա աղբ ,

Ջա՛ն , ա՛ղբեր , զա՛ն , հօ՛ .

Թօ՛ւ աբա աղբ ,

Ջա՛ն , ա՛ղբեր .

Գե՛ , սի՛րուն , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ ,

Գե՛ , ծի՛րան , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ ,

Գե՛ , sn՛կան , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , Ե՛լ , հօ՛ :

ՄՈԿԱՅ ՄԻՐՉԱ.

Դ Ի Ի Ց Ա Ձ Ն Ե Ր Գ

Օրն էր ուրբաթ ,
 Լուս ի շաբաթ ,
 Գեաշտ էրիր ենք Մալաքեաւէն :
 Թըղթիկ մեկաւ Ջըղիրու քաղքէն ,
 Ասին , բերին Մալաքեաւէն ,
 Տուին ի ձեռ Մոկաց Միրդէն ,
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրդէն :

Սուկ , կարգաց քաղցրիկ լեզուէն ,
 Էրաւ մաղդէն ,
 Շըլեց աչքեր , կախեց չանէն ,
 Քաղուաւ գոյն կա՛միր երեսէն :
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրդէն :

Կանչեց , ասաց իւր մըշակին , —
 Դո՛ւս քաշի բող — բեղաւին ,
 Վըրայ դըրէք թամբը սադաֆին ,
 Սաֆար կերթամ չուր Ջըղիրէն :
 Հազա՛ր ափսոս Մոկաց Միրդէն : Եւն .

Թ Ե Ի Պ Ա Ր

Սարը սարի նման չէ ,

Հօ՛յ , օրօ՛ր , աղիւնօ ,

Վարը քարի նման չէ .

Հօ՛յ , օրօ՛ր , աղիւնօ ,

Հարան ու աղջիկ շատ տեսայ ,

Հօ՛յ , օրօ՛ր աղիւնօ ,

Մէկն իմ կարին նման չէ :

Հօ՛յ , օրօ՛ր , աղիւնօ :

3. Բ.

ԹԸՌՆՈՑԻ ՊԱՐ

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր:

Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր.

Ա՛յ գիւլում կանչող աղջիկ,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,

Զէնքէ ծըլելալիս ա:
Սո՛նա սիրուճ, Սո՛նա եա՛ր:



Հ Ո Վ Ո Ւ Ե Ր Գ

Քէլէր, ցօլէր՝ իմ հարը,

Արեւի տակին

Քէլէր, ցօլէր՝ իմ հարը.

Սարի սովոր,

Մեն մենաւոր,

Շէ՛կ արդայ,

Շո՛ղ արեգակ,

Թո՛ղ արեգակ,

Ե՛կ, արդայ:

Քէլէր, ցօլէր՝ իմ հարը,

Աղբիւրի տակին

Քէլէր, ցօլէր՝ իմ հարը:

Կանաչ առուով,

Կանաչ առուով,

Ե՛կ, արդայ,

Բազումն արի,

Շաղումն արի,

Շէ՛կ արդայ:

Քէլէր , ցօլէր՝ իմ կարը ,

Գերանդին ուսին

Քէլէր , ցօլէր՝ իմ կարը .

Հուսնձ կս արել ,

Քրտինք դառել ,

Շէ՛կ տըղայ ,

Հով ծառի տակ ,

Զով ծառի տակ ,

Ե՛կ , տըղայ :

Քէլէր , ցօլէր՝ իմ կարը ,

Զա՛ն աչքի լուսին ,

Քէլէր , ցօլէր՝ իմ կարը .

Հով է , քընի՛ր ,

Զով է , քընի՛ր ,

Ե՛կ , տըղայ ,

Հուսնձ կս արել ,

Շատ բեղարել ,

Շէ՛կ տըղայ :

ԾԱՂՐԵՐԴ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ

Հինգ էծ ունիմ ուր էծէլով,
Իլիլի, սիլիլի.

Կաթ կը կըթեմ պըղընձնելով,
Իլիլի, սիլիլի.

Սեր կը չափեմ կաւի չափով,
Իլիլի, սիլիլի.

Եղ կը հանեմ լըւի արկով,
Իլիլի, սիլիլի:

ՊԱՐԵՐԳ ԹԸՌՆՈՑԻ

Չա՛ր՝ զը՛նզը, զա՛ր զը՛նզը, քո՛ղ զընգա.

Պարենն գիւեր լուսընկայ:

Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,

Չա՛ր՝ զը՛նզը, զա՛ր զը՛նզը, քո՛ղ զընգա.

Չիւնն եկեր՝ գետնն նաշխեր:

Պարենն գիւեր լուսընկայ:

Էլի պարը բոլորաւ,

Ետըս միջին մոլորաւ:

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Կու յն տասյ, Ելայ սարը,
 Չը գըտայ ֆիդան Կարը,
 Ֆիդան Կարը ինձ տը էք,
 Չը քաշեմ ահ ու դարը:

Մեծ սարի հովին մեռնեմ,
 Շէկ տըղի բոյին մեռնեմ.
 Մի տարի ա չե'մ տեսել,—
 Տեսնողի աչքին մեռնեմ:

Բըլբուլը դարի վերայ,
 Խնձորը սարի վերայ.
 Սիրած սիրածի տային,
 Չոր գեան':ն՝ քարի վերայ:

ԳԵՂՁԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Սարէն Եղու Երկու մուխ ,

Բոյիդ մեռնիմ ,

Մինը հանդ ա , մինը ծուխ ,

Սոյիդ մեռնիմ .

Երկու սիրուն Երեւոյ ,

Բոյիդ մեռնիմ ,

Մինը շէկ ա , մինը թուխ :

Սոյիդ մեռնիմ :

Իմ Կարն է շատ խորտիկ ,

Աչքերը նռան հատիկ .

Աստուած ս'ըէք , աղբըրաթ ,

Ինձ տարէք Կարիս մօտիկ :

ԳԵՂՁԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Գընա՛ , գընա՛ , հետիդ եմ ,

Հա՛ , հա՛ , հա՛ . հա՛ , հա՛ , հա՛ , հա՛ .

Սարի՛նօ , եա՛ր ջան ,

եարի՛նօ , եա՛ր ջան ,

Կարմ՛րք խնձոր գօտիդ եմ ,

Հա՛ , եարի՛նօ . եար ջան ,

Սարի՛նօ եա՛ր ջան :

Դու խնձ էս տեղ չես թողնի ,

Որ տեղ երթաս մօտիդ եմ :

Ապարանը քորոտ ա ,

Սիրուն կանաչ արօտ ա .

Ուղիդ եօթը տարի ա ,

Քոյրն աղբօրը կարօտ ա :

ՄԱՍՆ Գ.

(Շարունակութիւն)

I. Ա.

Ք Ա Ղ Շ Ա Ն Ե Ր Գ

Քաղհան կանեմ հօ՛ բարով ,

Եար , նայ , նայ , նայ , նայ , նայ ,

Տոլմա կեփեմ բիբարով ,

Սոնա եարբմ , նայ , նայ .

Սշնան անի լաւ օրեր ,

Եար , նայ , նայ , նայ , նայ , նայ ,

Բամպակ քաղեմ նուբարով :

Սոնա , եարբմ , նայ , նայ :

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ

(Ծաղրերգ)

Խուճար պառկե երեսրաց ,

Հո՛ւպ , հո՛ւպ , հոպպրսա՛ , գրմբա՛ .

Գեղին կարպեա , բըժբոււ բարձ :

Հո՛ւպ , հո՛ւպ , հոպպրսա՛ , գրմբա՛ ,

Հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե. հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե ,

Հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե. հե՛՛յ, հե՛՛յ, լա՛ւն ե :

Անուշ քրնէ երես բաց ,

Սահակն եկաւ խելք գընաց :

Հաջոնց կալը բոլորպար ,

Խուճար մէջը կը խաղար :

Ծամեր թալուկ իւր յետեւ ,

Կը թըռվըրէր շատ թեթեւ :

« Հաստա՛տ մընայ մեր հաջին ,

Որ պահէ մեր նոր փեսին » :

Գարնան բացուաւ նոր լալա ,

Խուճար բերաւ ջուխտ բալա :

Աչքըդ լոյս , հաջի աղա ,

Թոռներուդ հալաւ արա :

Պ Ա Ն Դ Խ Տ Ի Ե Ր Գ

Կռու՛նկ , ուստի՞ կուգաս , ծառայ կոմ
ձայնիդ ,

Կռու՛նկ , մեր աշխարհէն խարբիկ մը
չունիս :

Թողեր կոմ ու եկեր մըլքերս ու այդիս ,
Քանի որ ա՛խ կանեմ , կու քաղուի
հոգիս :

Ղարբիբ սիրան է խոց , ջիկեարն է
վարամ ,

Կերած հացն է լեզի ու ջուրն է հարամ :

Ինձ պատասխան չտուիր , ելար , գնացիր

Կռու՛նկ , մեր աշխարհէն գնա , հեռացիր :

Հ Ա Ր Ս Ն ՈՒ Կ Ի Ե Ր Գ

Արևը թըռվըրով ելաւ ,
 Իմ շինարի եարը .

Մեր բանը կռուով ելաւ ,
 Գարդիման եարը .

Թըչնամու սրղին մեռնի ,
 Իմ շինարի եարը ,

Իրա չար սըրտովն ելաւ :
 Գարդիման եարը :

Ճրագը վառ ա , վառ ա ,
 Հօր հետ վատամարդ դառայ .
 Մէր ու աղբէր թող տուի ,
 Ես իմ սիրածին առայ :

Քարափի ծէրին կանչի ,
 Թող թչնամին ամռնչի .
 Արևիդ մեռնիմ , կա՛ր ջան ,
 Չինարի պէս կանանչի :

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Կանչէ՛ կռու՛նկ, կանչէ՛, քանի դարուն է
 Ղարխրնեբու սիրարը գունդ գունդ
 արունէ .

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
 Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է .
 Ա՛խ, սիրարս արուն է :

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արօտ է .
 Աշխարհն է արեգակ, սիրարս կարօտ է .

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
 Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է .
 Ա՛խ, սիրարս կարօտ է :

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է .
 Աշնան կերթաս երկիր, եարիս բարեւէ .

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
 Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
 Ա՛խ, եարիս բարեւէ :

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԵՐԳ

Եկէ՛ք, ահտէ՛ք, ի՛նչն է կերթի զի՛նչ .
 Եկէ՛ք, ահտէ՛ք, էճն է կերթի զթուփ ,
 էժ վըր թըփի՛ն ,
 Թուփ վըր էգունն ,
 էգ պարագունն , պարագունն .
 Ի՛նչ խէր ու բարբի մ՛ էր եկաւ ,
 էս տարուանս տարունն :

Եկէ՛ք, ահտէ՛ք, ի՛նչն է կերթի զէճն .
 Եկէ՛ք, ահտէ՛ք, զէլն է կերթի զէճն .
 Գէլ վըր էժունն ,
 էժ վըր թըփի՛ն , (բս վերևոյն) :

Եկէ՛ք, ահտէ՛ք, ի՛նչն է կերթի զգէլն .
 Եկէ՛ք, ահտէ՛ք, խոզն է կերթի զգէլն .
 Խոզ վըր գիւռունն ,
 Գէլ վըր էժունն ,
 էժ վըր թըփի՛ն , (բս վերևոյն) :
 Եւ այլն :

12. Բ.

Թ Ե Ի Պ Ա Ր

Շորորա, անու՛ւ, ջա՛ն, շորորա:
 Անու՛ւ շորորով ես կորայ:
 Վարդ եմ՝ քաղել շաղկերով,
 Շորորա, անու՛ւ, ջա՛ն, շորորա:
 Վեր եմ՝ գրքել մաղկերով.
 Անու՛ւ շորորով ես կորայ:
 Մի ջուխդ շամամ՝ եմ՝ կորցրել,
 Շորորա, անու՛ւ, ջա՛ն, շորորա:
 Իրա կանաչ թաղկերով:
 Անու՛ւ շորորով ես կորայ:

12. Գ.

Փ Ա Թ Պ Ա Ր

Հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ լինի
 Եարիս սուր ծո՛ւ լինի.
 Թո՛ւ, քո՛ւ, քո՛ւ լինի,
 Եարս քամարով լինի:
 Գե՛՛ զանեք, զանեք, հողը հանեք,
 Մեր քնամու գողը հանեք:

Ծաղիկ և ծաղկանց միջին ,
Հո՛վ , հո՛վ , հո՛վ լինի ,
Մի հաս և աղջկանց միջին ,
Եարիս տունը ծո՛վ լինի .
Ե՛տր ինձ պարզե՛րես արա ,
Թո՛վ , քո՛վ , քո՛վ լինի ,
Իմ բնի՛ք մարդկանց միջին :
Եարքս համարով լինի :
Գե՛ զանեք , զանեք , հողը հանեք ,
Մեր բեճամու գողը հանեք :

Արի մի փոթաբար խաղանք ,
Տընկող մընանք չը կ սղանք .
Հարսանիքիդ ալիւրը
Մուղճու ու խտեց վաղ անցանք :
Իրար հեա բաղը գնանք ,
Ուտենք , խմենք , լիանանք ,
Թըչնամու աչքը հանենք ,
Մեր Սասըծուց գոհանանք :

ԳՈՒԹԱՆԵՐԳ ԼՈՒՈՒԱՅ ԳԱԻԱՌԻ

Հօ՛:—

*Օրհնեա՛լ է Աստուած ,**Յիշեա՛լ է Աստուած ,*

Հօ՛ , հօ՛ , եօ՛-ա՛ , հօ՛ հօ՛ հօ՛ հօ՛ հօ՛ .

Պոե՛րե , զոմե , հօ՛ , հօ՛յ , եօ՛- ա՛ .

Ա՛ն , հա՛ զոմե , հօ՛ , հօ՛յ եօ՛- ա՛ .

Տա՛ր , հա՛ զոմե , հօ՛ , հօ՛յ , եօ՛ :

Լուսը լուսացալ ,

Հա՛ , հա՛ ,

Փա՛նֆ ֆեզ , Տե՛ր .

Բարին շատացալ :

Հե՛ , հե՛ , հե՛ , հե՛ , հօ՛ , հօ՛յ .

եօ՛- ա՛ , հօ՛ , հօ՛ , հօ՛ , հօ՛ , հօ՛ :

Պոե՛րե , զոմե , հօ՛ , հօ՛յ , եօ՛- ա՛

Ա՛ն , հա՛ զոմե , հօ՛ , հօ՛յ , եօ՛ - ա՛ .

Տա՛ր , հա՛ զոմե , հօ՛ հօ՛յ եօ՛ :

Աղօթբան բացուալ ,

Հա՛ , հա՛ ,

Փա՛նֆ ֆեզ , փա՛նֆ :

Մեր ժամը լըցուալ :

Հե՛ , հե՛ ; եւ այլն . (ըստ վերնոյն) :

Պոեռե, ջա՛ն, հօ՛, պոօ՛րօ, հօ՛, պսի՛ւզի,
ջան .

Հօռօլայ, հօռօլայ, քե՛ դուրբան
Շի՛մալ ջան, հօռօլայ, քե՛ մեռնիմ .

Լա՛շին ջան, հօռօլա՛յ, հօռօլա՛յ, հօռօլօ՛

Եղնարած քընի ,

Հա՛, հա՛ .

Վե՛ր կայեք, գուրա՛նուր ,

Գութանը բանի :

Հե՛, հե՛, եւայլն (*ըստ վերնոյն*):

Պոե՛րե, ջա՛ն, եւայլն (*ըստ վերնոյն*):

Գալիս, գալիս է ,

Հա՛, հա՛ .

Այ . նըլվր՛ս, նըլվրս ,

Ալը Լալիս է .

Հե՛, հե՛, եւայլն: (*ըստ վերնոյն*):

Հօ՛յ, դու ելաւ . հօ՛ ա՛ .

Հօ՛յ, դո՛ւ ելաւ , հօ՛, ա՛ ,

Հօ՛յ, դո՛ւ ելաւ , հօ՛, ա՛ .

Հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ ,
Հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ . հօռօ .
Հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ ,
Հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ , հօռօ .

Հօ՛յ , ռա՛ւել ա , հօ՛ , ա՛ ,
Հօ՛յ , ռա՛ւել ա , հօ՛ , ա՛ ,
Հօ՛յ , ռա՛ւել ա , հօ՛ , ա՛ ,

Հօռօ , հօռօ , եւայլն (*լուս վերնայն*):

Հօ՛ , դո՛ւս ելաւ , հօ՛ :

Օրհնեա՛լ է Աստուած ,

Յիշեա՛լ է Աստուած :

Մաճկալը մաճին ,

Ա՛յ հորեւոր ,

Օղերն ականջին :

Հօտաղն է լալի ,

Քժի , ա՛յ լալիկ հօտալ ,

Միջակն է գալի :

Վարենք՝ շատանայ ,

Տո՛կան ջան ,

Տէրն ուրախանայ :

Թա՛փ տուր՝ թեւ արա ,

Ա՛յ խոփ ու ձեւիչ ,

Շուռ տուր՝ սե՛ւ արա : եւայլն

Ս Ի Փ Ա Ն Ա Յ Ք Ա Ջ Ե Ր

Քայլերգ.

Հօ՛ , Լօ՛ , Լօ՛ : Սէպ Սիփանայ սարի
 վերան
 Կտրիճներ շտապով դալիւս կն ժխանում .
 Ս.յնտ՛իդ անան որբիք , անյաղթ բարձր
 լերան ,
 Զէնք ու զբահի կն ընթանում :

Ինչո՞ւ վառում կն , զինւում ,
 Սանձակոծ ձի հեծնում անհամբեր ,
 Վառ արիւն է հողա քաջ սրաի մէջ
 կում ,
 Թըռչում , անցնում կն ամպեր ,
 Վան Սիփանայ պինդ քամին ,
 Սըլանում կն գէպի ցած ,
 Դաշտի մէջ է թըչնամին ,
 Նա է վառում հորա լրէժն անմոռաց :
 Գազանարար վառթար թըչնամին ,
 Հատու սուսերը հանել ,
 Հայ իշխանին է սպանել ,
 Այս է վառում քաջերին :

Հայ որևարն էլ ստի կանգնած՝
Այժմ թշնամուն մահու , մարտի
է կանչում ,
Մեծ վրէժ արեան վրէժ է նա
պահանջում .
Եւ թըշնամին պարտըւած ,
Թողնում փախչում սարէ սար ,
Յետ է ձգում մեծ աւար :

Արիւն թափեցին , փոխանակ արեան՝
Արիւն քամեց ծարաւի սուսեր ,
Սուրը յազեցաւ , յետ դէրն պատեան ,
Ելնում են հիմա սէզ Սիփոնն ի վեր :
Սէզ Սիփոնայ կանաչ գլխին
Հայ քաջերն անում են մեծ խնդում
Եւ ամպերի թանձրութեան միջին ,
Հըսկայ Սիփոնն ամբողջ թընդում .
« Էլ մօտ չեն դայ մեզ թշնամիք ,
Սուր տեսան մեր պողվատիկ » :

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR

BUREAU OF LAND MANAGEMENT

OFFICE OF THE ASSISTANT ATTORNEY GENERAL
WASHINGTON, D. C.

RECEIVED

APR 11 1954

U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT
WASHINGTON, D. C.

RECEIVED

APR 11 1954

RECEIVED

APR 11 1954

RECEIVED

APR 11 1954

RECEIVED

APR 11 1954

RECEIVED

Մ Ա Ս Ն Բ .

ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Գրի առաւ եւ դաշնաւորեց Կոմիտաս վրդայս.)

- 1.— Կաշերգ եւ սայլերգ

Կոմիտաս վրդ.	ՄԵՆԵՐԳ
մէկէն ուրբ ձայն	ԽՄԲԵՐԳ
- 2.— Մոկաց Միրզա

Կոմիտաս վարդապէս	ՄԵՆԵՐԳ
------------------	--------
- 3.— ա) Սարը սարի նման չէ

խառնաձայն	ԽՄԲԵՐԳ
-----------	--------

բ) Սոնա էար

վեցաձայն	ԽՄԲԵՐԳ
----------	--------
- 4.— Կէլեր , ցօլեր

Օր. Թ. Նախարար	ՄԵՆԵՐԳ
----------------	--------
- 5.— ա) Հիւնգ կծ ունիւմ

հնգաձայն	ԽՄԲԵՐԳ
----------	--------

բ) Չա՛ր , գրնգր

խառնաձայն	ԽՄԲԵՐԳ
-----------	--------
- 6.— Ծիրակի ծառ

Կոմիտաս վարդապէս	ՄԵՆԵՐԳ
------------------	--------
- 7.— ա) Կուժն առայ, եղայ սարը

խառնաձայն	ԽՄԲԵՐԳ
-----------	--------

բ) Սարեն եղաւ երկու մուշու

վեցաձայն	ԽՄԲԵՐԳ
----------	--------

գ) Գնա՛, գնա՛, հեկիդ եւ

վեցաձայն	ԽՄԲԵՐԳ
----------	--------


Մ Ա Ս Ն Գ .

ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

- 8.— ա) Գաղհան կանեւ՝ հմբերգ
վեցաձայն
բ) Խոռոնար պատկի երեսքաց հմբ
վեցաձայն
- 9.— Կոռունկ Մեներգ
Կոմիտա վարդապետ
- 10.— Իմ ջնարի եարք Մեներգ
Տիգ. Յ. ՉԷՅՔԵԳԵՆ
Բառաձայն հմբերգ
- 11.— Կանջի կոռունկ Մեներգ
Օր. Չ. ՌԵՏՈՒՆԻ
- 12.— ա) Էկե՛՛ֆ սեւե՛՛ֆ հմբերգ
Բառաձայն
բ) Շորորա, ԱնոյՉ հմբերգ
Բառաձայն
գ) Հն՛՛վ, հն՛՛վ, հն՛՛վ շինի հմբերգ
հնգաձայն
- 13.— Գուքակերգ Մեներգ
Կոմիտա վարդապետ
- 14.— Սիփակայ ֆաօեր հմբերգ
Բառաձայն





Zuff

0019037

278

2013

